Դասի Պլան

Թեման՝ **Ապահով համացանց**

Դպրոց՝ Կապանի N5 հիմնական դպրոց

Դասարան՝ 6-րդ դասարան (խմբակ)

Ուսուցիչ՝ Անահիտ Աղագուլյան

10.03.2015

Կապան 2015

Դասի նպատակ	
	• Համացանցից օգտվելու տեղեկատվության ապահովում • Համացանցի հնարավոր օգտակար և բացասական ազդեցությունների հետ ծանոթություն • Վնասակար տեղեկատվության դեմ պայքարի միջոցների իրազեկում
Խնդիրները	Համացանցից օգվելու կարողությունների ձևավորում
Կրթական	Ստացված գիտելիքների կիրառումը ուսուցման պրոցեսում Համեմատելու, հակադրելու ունակությունների ձևավորում և զարգացում
Դաստիարակչական	Համատեղ աշխատանքի կարողությունների ձևավորում Գովազդի և տեղեկատվության տարբերությունների մասին իմացություն Համացանցում ստեղծված գայթակղիչ թվացող առաջարկություններից պաշտպանվելու անհրաժեշտություն Չմտածված անհիմն քայլերի հնարավոր հետևանքների մասին իմացություն Համատեղ աշխատանքի մեջ սեփական դերի և պատասխանատվության գիտակցում, ուրիշի կարծիքը հարգելու, սեփականը արտահայտելու ունակությունների ձևավորում
Անհրաժեշտ սարքավորումներ	Համացանցին միացված համակարգիչներ, ցուցարկիչ, պաստառներ
Դասի ընթացքը	Կազմակերպչական մաս

Խթանման փուլ	**Քարտեզագրում-** <<Ի՞նչ է ապահով համացանցը իմ պատկերացմամբ>> (Գրառել բոլոր մտքերը գրատախտակին և խմբավորել)
Իմաստի ընկալում	1)Աշակերտները խմբերով ներկայացրին նախապես հանձնարարված իրենց աշխատանքները. <<Ապահով համացանցը մեր պատկերացմամբ>> թեմայով Ներկայացման ժամանակ սովորողները անդրադարձ կատարեցին հետևյալ հարցերին. 1. **Սոցիալական ցանցերի օգտագործումը մեր առօրյայում** 2. **Համացանցային խաղեր** Յուրաքանչյուր խմբի ներկայացումից հետո 3-4 րոպե տրամադրվեց հարց ու պատասխանի համար 2) Խմբային աշխատանք- Խմբերին տրվեց իրավիճակներ և հանձնարարվեց վերլուծել և ներկայացնել լուծման ռացիոնալ եղանակները: Խմբերի ներկայացրած լուծումները ներկայացնում ենք կից Power Point ծրագրով: (ցուցադրում 1) Այդ ընթացքում ուսուցիչը ցուցադրեց պատրաստի շնորհանդեսները և մեկնաբանեց դրանք: (նախորդ տարիներին աշակերտների պատրաստած պաստառները և ցուցադրումները) Ուսուցիչը տեղեկացրեց և ցուցադրեց վնասակար տեղեկատվության դեմ պայքարի միջոցների մասին, համացանցում առկա գայթակղիչ առաջարկների և դրանց հավանական հետևանքների մասին: (տեսահոլովակները վերցված են մեդիագրագիտության տրամադած նյութերից- կանոններ աշակերտների համար)
Կշռադատում	T-աձև աղյուսակի միջոցով ամփոփել դասը:

Գիտեի	Սովորեցի

Ծնողական ժողովի Պլան

Թեման՝ **Ապահով համացանց**

Դպրոց՝ Կապանի N5 հիմնական դպրոց

Ինֆորմատիկայի ուսուցիչ՝ Անահիտ Աղագուլյան

27.02.2015

Կապան 2015

Նպատակ

- Համացանցի կարևորությունը մեր կյանքում
- Համացանցից գրագետ օգտվելու կանոնների իմացության անհրաժեշտությունը
- Վնասակար տեղեկատվության դեմ պայքարի միջոցների իրազեկում

Անհրաժեշտ սարքավորումներ Համացանցին միացված համակարգիչ, պաստառներ

Ընթացքը

I-փուլ

- Ծանոթություն. << Ձնագնդի>> մեթոդի կիրառմամբ մասնակիցները ծանոթանում են միմյանց հետ:
- Զրույց երեխաների առօրյայի և տանը նրանց ազատ ժամանակի ճիշտ կազմակերպման մասին:

II-փուլ

- **Զեկուցում՝ <<Համացանցը, համակարգիչը և հեռուստացույցը երեխայի կյանքում և դրանց հետևանքները>>**
- **Տեսահոլովակի դիտում՝** (տեսահոլովակը վերցված է մեդիագրագիտության տրամադրած նյութերից-կանոններ աշակերտների համար)

III-փուլ

- Մտքերի փոխանակում.

Անդրադարձ կատարվեց հետևյալ հարցերին.

ա/ Ինչպե՞ս պլանավորել համակարգչից օգտվելու ժամանակը:

բ/ Սահմանափակել համացանցից օգտվելու հնարավորությունները /փակել անցանկալի կայքերի հասանելիությունը երեխաների համար/:

գ/ Առողջության վրա համակարգչի թողած բացասական ազդեցությունները:

դ/ Տեղեկություններ որակյալ ուսումնական կայքերի մասին:

IV-փուլ

Ծնողները բաժանվեցին երեք խմբի և պաստառների վրա կատարեցին իրենց հանձնարարված առաջադրանքները.

I խումբ.

Գրառել Ձեր տեսակետները զեկուցման և տեսահոլովակի մասին

II խումբ.

Գրառել Ձեր վերաբերմունքը, կարծիքները համացանցի օգտակար և վնասակար ազդեցությունների մասին

III խումբ.

Ներկայացնել Ձեր երեխաների առօրյան համացանցում

Աշխատանքի ավարտից հետո ծնողները ներկայացրին իրենց պատրաստած պաստառները լսարանին, որից հետո ծավալվեց քննարկում:

Ժողովի ավարտին ծնողները իրենց վերաբերմունքը արտահայտեցին թեմայի վերաբերյալ քարտեզագրման միջոցով: